

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՍԱԿԱԳՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Մոսկվա, 2010 թվականի դեկտեմբերի 9)

Բելառուսի Հանրապետության Կառավարությունը, Ղազախստանի Հանրապետության Կառավարությունը եւ Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը (այսուհետ՝ Կողմեր),

հիմնվելով Ռուսաստանի Դաշնության եւ Բելառուսի Հանրապետության միջեւ՝ «Մաքսային միության մասին» 1995 թվականի հունվարի 6-ի համաձայնագրի, «Մաքսային միության մասին» 1995 թվականի հունվարի 20-ի համաձայնագրի, «Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի մասին» 1999 թվականի փետրվարի 26-ի պայմանագրի, «Մրցակցության միասնական սկզբունքների եւ կանոնների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 9-ի համաձայնագրի, «Բնական մենաշնորհների սուբյեկտների գործունեության կարգավորման միասնական սկզբունքների եւ կանոնների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 9-ի համաձայնագրի վրա,

ընդունելով Կողմ հանդիսացող պետությունների երկաթուղային տրանսպորտի ծառայություններին հասանելիություն եւ այդ ծառայությունների դիմաց սակագների պետական կարգավորմանը համաձայնեցված մոտեցումներ ապահովելու անհրաժեշտությունը,

Միասնական տնտեսական տարածքի շրջանակներում տրանսպորտային ծառայությունների ընդհանուր շուկա ձեւավորելու նպատակով

համաձայնեցին հետեւյալի մասին.

Հոդված 1

Համաձայնագրի նպատակները

Սույն Համաձայնագրի նպատակներն են՝

Կողմ հանդիսացող պետությունների ծառայություններից օգտվողների համար երկաթուղային տրանսպորտի ծառայություններին հասանելիության ապահովումը՝ Կողմ հանդիսացող յուրաքանչյուր պետության տարածքով փոխադրումներն այնպիսի պայմաններով

իրականացնելու դեպքում, որոնք տվյալ Կողմ հանդիսացող յուրաքանչյուր պետության ծառայություններից օգտվողների համար ստեղծված պայմաններից պակաս բարենպաստ չեն.

տնտեսական շահերի հավասարակշռության պահպանումը՝ Կողմերի երկաթուղային տրանսպորտի ծառայություններից օգտվողների եւ երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունների միջեւ,

Կողմ հանդիսացող մեկ պետության երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունների համար Կողմ հանդիսացող մյուս պետության երկաթուղային տրանսպորտի ծառայությունների ներքին շուկային հասանելիություն ունենալու պայմանների ապահովումը,

Հոդված 2

Սույն Համաձայնագրում գործածվող հասկացությունների սահմանումները

Սույն Համաձայնագրում գործածվող հասկացություններն ունեն հետեւյալ իմաստը՝

«երկաթուղային տրանսպորտի ծառայություններին հասանելիություն»՝ Կողմ հանդիսացող մեկ պետության երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունների կողմից ծառայությունների մատուցումը Կողմ հանդիսացող մյուս պետության ծառայություններից օգտվողներին՝ այնպիսի պայմաններով, որոնք առաջին Կողմ հանդիսացող պետության ծառայություններից օգտվողների համար համանման ծառայությունների մատուցման պայմաններից պակաս բարենպաստ չեն,

«երկաթուղային տրանսպորտի ծառայություններ»՝ այն ծառայությունները (աշխատանքները), որոնք երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունների կողմից մատուցվում են ծառայություններից օգտվողներին, (կատարվում են ծառայություններից օգտվողների համար) եւ որոնք նշված են սույն Համաձայնագրի հավելվածում,

«երկաթուղային տրանսպորտի կազմակերպություն»՝ ծառայություններից օգտվողներին երկաթուղային տրանսպորտի ծառայություններ մատուցող Կողմ հանդիսացող պետության ֆիզիկական կամ իրավաբանական անձը,

«ծառայություններից օգտվող»՝ Կողմ հանդիսացող պետության ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որն օգտվում է կամ մտադիր է օգտվել երկաթուղային տրանսպորտի ծառայություններից,

«երկաթուղային տրանսպորտի ծառայությունների սակագին»՝ երկաթուղային տրանսպորտի ծառայությունների արժեքի դրամական արտահայտությունը,

«փոխադրող»՝ բեռների, ուղեւորների, ուղեբեռների, բեռնաճանրոցների եւ փոստային առաքանիների փոխադրման գործունեություն իրականացնող երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունը, որն ունի համապատասխան լիցենզիա եւ սեփականության իրավունքով կամ օրինական այլ հիմքով՝ շարժակազմ, այդ թվում՝ քարշակող տրանսպորտային միջոցներ,

«ենթակառուցվածք»՝ երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքը, որը ներառում է երկաթուղային գծեր եւ կայարանային գծեր, ինչպես նաեւ էլեկտրամատակարարման, ազդանշանային համակարգերի, կապի օբյեկտներ, սարքեր, սարքավորումներ, շենքեր, շինություններ, կառույցներ եւ այլ օբյեկտներ, որոնք տեխնոլոգիապես անհրաժեշտ են դրա գործունեության համար,

«ենթակառուցվածքի ծառայություններ»՝ փոխադրումների իրականացման համար ենթակառուցվածքների օգտագործման հետ կապված ծառայություններ եւ այլ ծառայություններ, որոնք նշված են սույն Համաձայնագրի 5-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն մշակվող փաստաթղթերում,

բացառիկ սակագներ՝ բեռների փոխադրման համար երկաթուղային տրանսպորտի ծառայությունների սակագները, որոնք սահմանվում են նշված ծառայությունների սակագների նկատմամբ ժամանակավոր գործակից կամ հատուկ դրույքաչափեր կիրառելու միջոցով՝ սույն Համաձայնագրի եւ Կողմ հանդիսացող յուրաքանչյուր պետության օրենսդրության համաձայն:

Սույն Համաձայնագրում գործածվող այլ հասկացություններ կիրառվում են այն իմաստներով, որոնք նշված են «Բնական մենաշնորհների սուբյեկտների գործունեության կարգավորման միասնական սկզբունքների եւ կանոնների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 9-ի համաձայնագրում:

Հոդված 3

Համաձայնագրի կիրառության ոլորտը

1. Սույն Համաձայնագիրը տարածվում է երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունների, ծառայություններից օգտվողների, Կողմերի պետական կառավարման մարմինների միջեւ եղած հարաբերությունների վրա՝ երկաթուղային տրանսպորտի ծառայությունների առնչությամբ:

2. Սույն Համաձայնագրի դրույթներով չեն շոշափվում Կողմերի՝ միջազգային այն պայմանագրերից բխող իրավունքներն ու պարտավորությունները, որոնց մասնակիցն են այդ Կողմերը:

3. Սույն Համաձայնագրում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես պարտավորեցնող, որպեսզի Կողմերից որեւէ մեկը սույն Համաձայնագրից բխող կանոնները եւ (կամ) առավելությունները տարածի սույն Համաձայնագրի մասնակից չհանդիսացող երրորդ պետությունների կամ այդ երրորդ պետությունների տնտեսվարող սուբյեկտների, նրանց ապրանքների կամ ծառայությունների վրա:

Հոդված 4

Ծառայությունների օգտվողների հասանելիությունը՝ երկաթուղային տրանսպորտի ծառայություններին

Անկախ ծառայություններից օգտվողի՝ Կողմ հանդիսացող այս կամ այն պետությանը պատկանելու հանգամանքից, նրա կազմակերպատիրավական ձեւից՝ երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունները նրա համար ապահովում են հասանելիություն երկաթուղային տրանսպորտի ծառայություններին՝ հաշվի առնելով սույն Համաձայնագրի 5-րդ հոդվածի եւ «Մրցակցության միասնական սկզբունքների եւ կանոնների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 9-ի համաձայնագրի դրույթները:

Հոդված 5

Ենթակառուցվածքի ծառայություններին փոխադրողի հասանելիության ապահովումը

1. Կողմերը 2015 թվականի հունվարի 1-ից սկսած Կողմ հանդիսացող պետությունների փոխադրողների համար ապահովում են հասանելիություն՝ ենթակառուցվածքի ծառայություններին՝ պահպանելով հետեւյալ սկզբունքները.

փոխադրողներին ներկայացվող այն պահանջների հավասարությունը, որոնք սահմանված են Կողմ հանդիսացող յուրաքանչյուր պետության օրենսդրությամբ,

փոխադրողների կողմից այն երկաթուղային շարժակազմի տեխնիկական պատշաճ վիճակի ապահովումը, որն իրենք օգտագործում են,

Ենթակառուցվածքի ծառայություններին հասանելիության ապահովումը ենթակառուցվածքի թողունակության սահմաններում՝ ելնելով տեխնիկական եւ տեխնոլոգիական հնարավորություններից,

Ենթակառուցվածքի ծառայությունների ոլորտում փոխադրողների նկատմամբ միասնական գնային (սակագնային) քաղաքականության կիրառումը,

Ենթակառուցվածքի ծառայությունների ցանկի, դրանց մատուցման կարգի, սակագների, այդ ծառայությունների դիմաց վճարի եւ գանձումների մասին տեղեկատվության հասանելիությունը՝ երկաթուղային տրանսպորտով փոխադրման գործընթացի բոլոր մասնակիցներին:

2. Մինչեւ 2013 թվականի հունվարի 1-ը Կողմերը մշակում եւ ընդունում են փաստաթղթեր, որոնցով սահմանվում են Միասնական տնտեսական տարածքի շրջանակներում ենթակառուցվածքի ծառայություններին հասանելիության կանոնները, ենթակառուցվածքի ծառայությունների մատուցման կանոնները, որոնք ներառում են այդ ծառայությունների ցանկը, ենթակառուցվածքի դիսպետչերացման (կարգավարացման) եւ թողունակության բաշխման միասնական սկզբունքները, ենթակառուցվածքի ծառայություններին հասանելիություն տրամադրելու առաջնահերթությունը որոշող միասնական կանոնները, ենթակառուցվածքի ծառայությունների մատուցման մասին պայմանագրերի էական պայմանները, որոնք կարգավորում են լիցենզավորման հարցերը, ինչպես նաեւ՝ ներառում Կողմ հանդիսացող պետությունների փոխադրողների համար ենթակառուցվածքի ծառայություններին հասանելիություն ապահովելու համար անհրաժեշտ այլ դրույթներ:

3. Նախքան սույն հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Կողմերից յուրաքանչյուրը կավարտի փոխադրողների համար ենթակառուցվածքի ծառայություններին հասանելիություն ապահովելու հետ կապված միջոցառումները, մեկ Կողմի փոխադրողների համար մյուս Կողմի ենթակառուցվածքի ծառայություններին հասանելիությունը կարող է ապահովվել փոխադարձ հիմունքով՝ համապատասխան համաձայնագրերի հիման վրա:

Հոդված 6

Սակագնային քաղաքականությունը

1. Երկաթուղային տրանսպորտի ծառայությունների սակագները եւ (կամ) դրանց առավելագույն մակարդակը սահմանվում են Կողմ հանդիսացող պետություններից յուրաքանչյուրի օրենսդրության եւ միջազգային պայմանագրերի համաձայն՝ սակագների

դիֆերենցման հնարավորության ապահովմամբ, այդ թվում՝ ըստ բեռների տեսակի, վագոնների տիպի եւ պատկանելության՝ կախված փոխադրման հեռավորությունից, վագոնների բեռնվաճուրդի աստիճանից՝ պահպանելով հետեւյալ սկզբունքները՝

տնտեսապես հիմնավորված այն ծախսերի փոխհատուցումը, որոնք ուղղակիորեն կապված են երկաթուղային տրանսպորտի ծառայությունների մատուցման հետ,

ենթակառուցվածքի զարգացման ապահովումը,

երկաթուղային տրանսպորտի ծառայությունների սակագների թափանցիկության, ինչպես նաեւ՝ այդ սակագները եւ (կամ) դրանց առավելագույն մակարդակը տնտեսական պայմանների կտրուկ փոփոխության դեպքում լրացուցիչ վերանայելու հնարավորության ապահովումը՝ Կողմերին նախապես տեղեկացնելու միջոցով,

երկաթուղային տրանսպորտի ծառայությունների սակագները սահմանելու վերաբերյալ որոշումների կայացման բաց եւ հրապարակային գործընթացի ապահովումը,

բեռների անվանացանկը եւ երկաթուղային տրանսպորտի ծառայությունների սակագների սահմանման կանոնները որոշելու գործընթացներին ներդաշնակեցված մոտեցման կիրառումը,

Կողմ հանդիսացող յուրաքանչյուր պետությունում երկաթուղային տրանսպորտի ծառայությունների սակագնի արժույթը որոշելը՝ Կողմ հանդիսացող յուրաքանչյուր պետության օրենսդրության համաձայն:

2. Երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունները Կողմ հանդիսացող իրենց պետության տարածքում կիրառում են երկաթուղային տրանսպորտի ծառայությունների այն սակագները, որոնք սահմանված են Կողմ հանդիսացող իրենց պետության օրենսդրության համաձայն՝ հաշվի առնելով սույն Համաձայնագրի դրույթները:

3. Մինչեւ 2013 հունվարի 1-ը Կողմերը միասնականացնում են Կողմ հանդիսացող իրենց պետության տարածքով բեռների փոխադրման համար երկաթուղային տրանսպորտի ծառայությունների սակագները՝ ըստ հաղորդակցության տեսակների (բեռների փոխադրման համար երկաթուղային տրանսպորտի ծառայությունների արտահանման, ներմուծման եւ ներպետական սակագներ):

4. Կողմ հանդիսացող պետությունների երկաթուղային տրանսպորտի մրցունակությունը բարձրացնելու, բեռների փոխադրումը երկաթուղային տրանսպորտով իրականացնելու համար բարենպաստ պայմաններ ստեղծելու, նախկինում երկաթուղային տրանսպորտով չփոխադրվող

բեռների նոր հոսքեր ներգրավելու, երկաթուղիներով բեռների փոխադրումների՝ չգործարկված կամ քիչ գործարկված երթուղիներից օգտվելու հնարավորություն ապահովելու, Կողմ հանդիսացող պետությունների երկաթուղիներով բեռների փոխադրման ծավալների աճը խթանելու, նոր տեխնիկայի եւ տեխնոլոգիաների ներդրումը խթանելու նպատակով՝ 2013 թվականի հունվարի 1-ից երկաթուղային տրանսպորտի կազմակերպություններին տրվում է բեռների փոխադրման համար երկաթուղային տրանսպորտի ծառայությունների սակագների մակարդակը փոփոխելու մասին որոշումներ կայացնելու իրավունք՝ ելնելով տնտեսական նպատակահարմարությունից, գնային այն սահմաններում, որոնք սահմանված են Կողմ հանդիսացող պետությունների լիազոր մարմինների կողմից:

5. Երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունները բեռների փոխադրման համար երկաթուղային տրանսպորտի ծառայությունների սակագների մակարդակը գնային սահմանների շրջանակներում փոփոխելու իրենց տրված իրավունքն իրականացնում են այն մեթոդաբանության համաձայն, որը հաստատվում է Կողմ հանդիսացող պետությունների լիազոր մարմինների կողմից եւ որով որպես հիմնական սկզբունք՝ նախատեսվում է Կողմ հանդիսացող պետությունների որոշակի ապրանք արտադրողների համար առավելություններ ստեղծելու անթույլատրելիությունը:

6. Բեռների փոխադրման համար երկաթուղային տրանսպորտի ծառայությունների սակագների մակարդակը փոփոխելու մասին որոշումները ենթակա են պաշտոնական հրապարակման՝ Կողմ հանդիսացող յուրաքանչյուր պետության օրենսդրության համաձայն, Կողմ հանդիսացող պետությունների լիազոր մարմիններին եւ Մաքսային միության հանձնաժողովին պարտադիր կերպով ուղարկելուն՝ մինչեւ դրանք ուժի մեջ մտնելու ամսաթվից 10 օրվանից ոչ ուշ:

7. Այն դեպքում, երբ բեռների փոխադրման համար երկաթուղային տրանսպորտի ծառայությունների սակագների մակարդակը փոփոխելուն ուղղված երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունների գործողությունների հետեւանքով խախտվում են ծառայություններից օգտվողների իրավունքներն ու շահերը, ապա ծառայություններից օգտվողներն իրավասու են իրենց խախտված իրավունքների եւ շահերի պաշտպանության մասին դիմում ներկայացնելու Կողմ հանդիսացող այն պետության ազգային հակամենաշնորհային մարմին, որի տարածքում ծառայություններից օգտվողները գտնվում կամ բնակվում են:

Այն դեպքում, երբ Կողմ հանդիսացող պետության ազգային հակամենաշնորհային մարմինը, որի տարածքում գտնվում կամ բնակվում է ծառայություններից օգտվողը, վերջինիս դիմումն ուսումնասիրելիս ընդունում է ծառայություններից օգտվողի պահանջների հիմնավորվածությունը,

ապա այն Մաքսային միության հանձնաժողով է ուղարկում ուսումնասիրություն անցկացնելու մասին հարցում՝ դրան կից ներկայացնելով ծառայություններից օգտվողի նշված դիմումը:

Հիմնվելով Կողմ հանդիսացող այն պետության ազգային հակամենաշնորհային մարմնի հարցման վրա, որի տարածքում գտնվում կամ բնակվում է ծառայություններից օգտվողը, Մաքսային միության հանձնաժողովն ուսումնասիրում է ծառայություններից օգտվողի դիմումը՝ սույն հոդվածի 9-րդ կետում նշված կանոնների համաձայն, եւ ուսումնասիրության արդյունքներով իրավասու է կասեցնելու կամ չեղյալ հայտարարելու երկաթուղային տրանսպորտի կազմակերպության այն որոշումը, որը վերաբերում է բեռների փոխադրման համար երկաթուղային տրանսպորտի ծառայությունների սակագների մակարդակը փոփոխելուն՝ Կողմ հանդիսացող պետությունների լիազոր մարմինների կողմից հաստատվող մեթոդաբանության համաձայն սահմանված գնային սահմանների շրջանակներում, ինչպես նաեւ այն դեպքում, երբ ուսումնասիրության ընթացքում արձանագրվում է նշված մեթոդաբանության անհամապատասխանություն սույն Համաձայնագրի դրույթներին, ապա այն իրավասու է կայացնելու հայտնաբերված անհամապատասխանությունը վերացնելու մասին որոշում:

8. Մինչեւ 2013 թվականի հունվարի 1-ը Կողմ հանդիսացող պետությունների երկաթուղիների վրա կարող են գործել Կողմ հանդիսացող պետություններից յուրաքանչյուրի օրենսդրության համաձայն սահմանված բացառիկ սակագներ:

2013 թվականի հունվարի 1-ից Կողմ հանդիսացող պետությունների լիազոր մարմինները կարող են, Մաքսային միության հանձնաժողովի համաձայնությամբ, սահմանել բացառիկ սակագներ՝ որոշակի բեռների փոխադրման առանձին ուղղությունների համար այն դեպքում, երբ ապրանք արտադրողներին այլ ձեւով աջակցություն տրամադրել հնարավոր չէ:

9. Մինչեւ 2012 թվականի հուլիսի 1-ը Կողմերը մշակում եւ ընդունում են բացառիկ սակագների սահմանման միասնական կանոններ, որոնցով որոշվում են Կողմ հանդիսացող պետությունների ապրանք արտադրողներին բացառիկ սակագների տրամադրելու կարգը եւ բացառիկ սակագներ սահմանելու անհրաժեշտությունը հիմնավորող անհրաժեշտ նյութերի ցանկը, ինչպես նաեւ Մաքսային միության հանձնաժողովի կողմից ծառայություններից օգտվողների դիմումներն ուսումնասիրելու կանոնները՝ սույն հոդվածի 7-րդ կետի համաձայն:

Հոդված 7

Տարանցումը

1. Երրորդ երկրներից երրորդ երկրներ բեռների փոխադրման ժամանակ Կողմերը կիրառում են համակարգված եւ համաձայնեցված սակագնային քաղաքականություն՝ Կողմ հանդիսացող պետությունների երկաթուղիներով բեռների տարանցիկ փոխադրումների առնչությամբ՝ Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների երկաթուղային տրանսպորտին վերաբերող համաձայնեցված սակագնային քաղաքականություն սահմանելու մասին հայեցակարգին համապատասխան, որը համաձայնեցված է Անկախ պետությունների համագործակցության կառավարությունների ղեկավարների խորհրդի 1996 թվականի հոկտեմբերի 18-ի որոշմամբ:

2. 2013 թվականի հունվարի 1-ից Կողմ հանդիսացող մի պետության տարածքից Կողմ հանդիսացող մյուս պետության տարածքով դեպի երրորդ երկրներ եւ հակառակ ուղղությամբ բեռների՝ երկաթուղային տրանսպորտով տարանցիկ փոխադրումների դեպքում, ինչպես նաեւ Կողմ հանդիսացող պետությունների միջեւ Կողմ հանդիսացող այլ պետության տարածքով բեռների՝ երկաթուղային տրանսպորտով տարանցիկ փոխադրումների դեպքում Կողմերից յուրաքանչյուրը կիրառում է սույն Համաձայնագրի 6-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված՝ այդ յուրաքանչյուր Կողմի միասնականացված սակագինը:

Հոդված 8

Համաձայնագրի կիրարկումը

1. Կողմերը նշանակում են իրենց լիազոր մարմիններին, որոնք պատասխանատու են սույն Համաձայնագրի կիրարկման համար:

2. Կողմերն իրենց լիազոր մարմինների նշանակման եւ դրանց պաշտոնական անվանման մասին միմյանց եւ Մաքսային միության հանձնաժողովին տեղեկացնում են սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից սկսած 30 օրվանից ոչ ուշ:

3. Մաքսային միության հանձնաժողովը սույն Համաձայնագրի կիրարկման ուղղությամբ կատարվող աշխատանքների արդյունքները Կողմերի լիազոր մարմինների համաձայնությամբ ներկայացնում է ԵվրԱզԷՍ-ի Միջպետական խորհրդի (Մաքսային միության բարձրագույն մարմնի) ուսումնասիրությանը:

4. Մաքսային միության հանձնաժողովին վերապահվում են սույն Համաձայնագրի իրականացումը վերահսկելու լիազորությունները:

Հոդված 9

Վեճերի կարգավորումը

Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման կամ կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են Կողմերի միջև խորհրդակցությունների եւ բանակցությունների միջոցով, այդ թվում՝ Մաքսային միության հանձնաժողովի մասնակցությամբ, իսկ այդ խորհրդակցությունների կամ բանակցությունների մեկնարկի պահից սկսած վեց ամսվա ընթացքում համաձայնություն ձեռք չբերելու դեպքում, շահագրգիռ Կողմերից որեւէ մեկը դրանք փոխանցում է Եվրասիական տնտեսական համայնքի դատարան:

Եվրասիական տնտեսական համայնքի դատարան դիմած Կողմը շահագրգիռ մյուս Կողմերին պետք է դրա մասին ծանուցի դիմելու պահից սկսած 30 օրը չգերազանցող ժամկետում:

Հոդված 10

Համաձայնագրում փոփոխություններ կատարելը

Կողմերի համաձայնությամբ՝ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են արձանագրությամբ:

Հոդված 11

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու, դրան միանալու եւ դրանից դուրս գալու կարգը

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու, դրան միանալու եւ դրանից դուրս գալու կարգը սահմանվում է «Մաքսային միության իրավապայմանագրային բազայի ձեւավորմանն ուղղված միջազգային պայմանագրերն ուժի մեջ մտնելու, դրանցից դուրս գալու եւ դրանց միանալու կարգի մասին» 2007 թվականի հոկտեմբերի 6–ի արձանագրությամբ:

Կատարված է Մոսկվա քաղաքում, 2010 թվականի դեկտեմբերի 9–ին, մեկ բնօրինակից՝ ռուսերենով:

Սույն Համաձայնագրի բնօրինակը պահվում է Եվրասիական տնտեսական համայնքի
ինտեգրման հարցերով կոմիտեում, որը սույն Համաձայնագրի ավանդապահն է:

Բնօրինակի պատճենները հաստատվում են Եվրասիական տնտեսական համայնքի
ինտեգրման հարցերով կոմիտե կողմից եւ ուղարկվում յուրաքանչյուր Կողմին:

(ստորագրություններ)

Հավելված

**«Երկաթուղային տրանսպորտի
ծառայություններին հասանելիությունը, այդ
թվում՝ սակագնային քաղաքականության
հիմունքները կարգավորելու մասին»
համաձայնագրի**

ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ) ՑԱՆԿԸ

1. Բեռների փոխադրումը եւ լրացուցիչ ծառայությունները (աշխատանքները), որոնք կապված են կազմակերպության եւ բեռների (այդ թվում՝ դատարկ շարժակազմերի) փոխադրումն իրականացնելու հետ:

2. Ուղեւորների, ուղեբեռների, բեռնաձանրոցների փոխադրումը եւ լրացուցիչ ծառայությունները (աշխատանքները), որոնք կապված են ուղեւորների, ուղեբեռների, բեռնաձանրոցների փոխադրման հետ:

3. Ենթակառուցվածքի ծառայություններ: